

Մշակութային և Հասարակական
Երկշաբաթաբեր

Ջոյս

1200 թուման
Հայաստանում 320 դրամ

**ԲԱՆՈՐԸ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՆ
ՏԱԼԻՍ ՄՆԻԷԼ ՕՐԳԱՆԻԿ, ԲԱՅՅ
ՈՐՈՂՔ ԵՆ ՕՐԳԱՆԻԿ ՄՆՆԴԻ
ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Չատիկ**
- 3 **Իրանական արևեստի ցուցահանդես երեւանում**
Լիլիթ Ամիրխանեան
- 4 **Աստվածար Մարանդում / Շրդեհ երեւանում**
- 5 **Ինչո՞ւ այս տարի Նովրուզին քիչ իրանցիներ**
եկան երեւան
- 6 **«Պտոյտ մը» Մեղրիի անցակետի երկու**
կողմերում
Տիգրան Դաւթեան
- 7 **Աստղիկ Բաբայեան-Ռուբիկ Սարգսրեան**
բանավէճ
Մ.Մ.
- 14 **Աւեցիննայի «Սալաման եւ Էբսար» վիպակը**
Ա. Շահումվարեան
- 17 **Օրգանիկ սննդի առաւելութիւնները**
Ջեֆրի Քլուզեր
- 22 **Խոհանոց՝ Պանիրով գաւաթի կէքս**
- 23 **Տնտեսուհու անկիւն**
- 24 **Մարգանք**
Արման Տէր Ստեփանեան
- 26 **Ժամանց**

Մշակութային եւ Հասարակական

Յոյս

Երկշաբաթաթերթ

Ե տարի, քիւ119, Ապրիլ 4, 2012,
1200 թուման
Հայաստանում 320 դրամ

- 8 **Համայնքը՝ Նոր Տարուզ Նովրուզ**
Ռոբերթ Սաֆարեան
- 8 **Բիւջէի քննարկում՝ 2 միլիարդ թուման բաց**
- 9 **Ի՞նչ է «պարզ մեծամասնութիւն»**
- 10 **Հաշուեփակումը ուսուցիչների հետ՝ միայն**
փոխհամաձայնութեամբ
- 11 **Էմիլ Մնացականեան՝ Մեր հարստութիւնները**
ծախսելով ենք առաջ գնում
- 12 **Շաքէ Աւետեան՝ Ուսուցիչներին պիտի**
հանգիստ թողնել
- 13 **Մեջլիսի ընտրութիւնների հայ**
թեկնածուները՝ առաջին



Պ ա ր ս կ ե ր է ն ք ա ժ ի ն

- | | | | | | |
|---|--|---|--|----|---|
| 2 | Այս համարի հայերէն
էջերում | 6 | Ս. Գրիգոր Լուսաւորչի
աջի տեղափոխումը
Ն. Զուլա
Յարութիւն Տէր
Յովհանեան | 10 | Իրանի եւ Հայաստանի
Գիլիջան քաղաքները
Յովիկ Սիմասեան |
| 3 | Ն. Զուլայի Ս. Ամենափրկիչ
վանքի վերաբացում | | | 11 | Իրանահայ Պարսկագիր
գրողներ՝ Արագ
Բարսեղեան |
| 4 | Ինչո՞ւ իրանահայերը
Նովրուզը չեն տօնում
Ռոբերթ Սաֆարեան | 8 | «Անբան Հուրի»-ի նոր
հրատարակութիւն | | |

<p>Յոյս</p> <p>Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ</p> <p>Արտօճատը՝ Լեւոն Ահարոնեան</p> <p>Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան</p>	<p>Խմբագրական կազմ՝</p> <p>Քարմեն Ազարեան, Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայելեան</p> <p>Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան</p>	<p>Հայերէն բաժնի սրբագրիչ՝ Քարմեն Ազարեան</p> <p>Կայք Քաջիկ Սաֆարեան</p> <p>Մարգական Արման Տէր Ստեփանեան</p> <p>Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի</p>	<p>Հասցէ՝ Թեհրան, Էնդելար պողոտայ, Վալի Ասր քառուղի համար 1048 66495180 66492693</p> <p>Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208</p> <p>hooyes@inbox.com www.hooyes.com</p>
--	---	--	---

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԻՄՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ
ՇՆՈՐՀԱԴՈՐ Ս. ԶԱՏԻԿ



ԻՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԻԵՍՏԻ ՑՈՒՑԱԶԱՆՂԷՍ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Լիլիթ Ամիրխանյան

Գարնանամուտի եւ իրանական նոր տարւայ օրը՝ Մարտի 20-ին Երեւանում տեղի ունեցաւ բացառիկ ցուցահանդէս՝ նւիրւած Իրանի ժամանակակից արւեստին: Ցուցահանդէսը կազմակերպւել էր Նորարար Փորձառական Արւեստի Կենտրոնի կողմից: Ստեղծագործութիւնները բազմաժանր էին՝ գեղանկար, լուսանկար, ինստալացիա, video art եւ այլն: Ինչպէս նշեց մեզ հետ զրոյցում ցուցահանդէսի համադրող Շաքէ Ամիրխանյանը՝ ներկայացւած են իրանցի տարբեր սերնդի արւեստագէտների գործեր: Օրինակ Ղոբադ Շիւանի կողքին, ով իրանական գրաֆիկայի ինքնատիպ դեքերից մէկն է եւ իրանական պատկերային մտածողութեան կրող, ներկայացւած էր ժամանակակից մէկ այլ գրաֆիկ արւեստագէտ՝ Ռուզբէի Մաշհադիզադէի: Նրանց միջեւ գրեթէ մէկ սերնդի տարբերութիւն կայ: Երկուսն էլ իրանական տարրեր են օգտագործում իրենց արւեստում, մէկը՝ աւելի աւանդական, մոդէռնաւանդական, իսկ միւսը՝ բացարձակ մոդէռն: Ռուզբէի Մաշհադիզադէի գործերից ցուցադրւած էին կալիգրաֆիկ նկարչութեան հետաքրքիր նմուշներ, որտեղ արւեստագէտն օգտագործել էր մոդէռն գունաւորում եւ ձեւաւորում: Ջամշիդ Լէյսին մասնագիտութեամբ ճարտարապետ է, բայց եւ նկարիչ, աչքի է ընկնում իր իւրօրինակ մտածողութեամբ: Նա թէյի տոպրակների՝ թղթի վրայ թողած պատահական հետքերի հիման վրայ ստեղծել է ինքնատիպ գծանկարներ: Ներկայացւած էին երկու լուսանկարիչներ՝ Շահրիար Ղադիրին, ում թեման աւանդական իրանական ճարտարապետութիւնն է եւ Ամին Սոհամադիին,



ով ժամանակակից լուսանկարչական գործեր էր ներկայացրել: Ճանաչւած արւեստագէտ Ֆերէյդուն Աւի աշխատանքներից ցուցադրւած էր միայն video-art: Փառատօնի համադրող Շաքէ Ամիրխանի խօսքերով տեղափոխման խնդիրներն արգելք հանդիսացան, որ Երեւան բերեն նաեւ արւեստագէտի նկարչական աշխատանքները: Ընդհանուր առմամբ հեղինակները տասնչորսն էին՝ Մասթանէ Շոքրի, Ղոբադ Շիւա, Սանազ Շաֆադի, Մոժգան Սադրի, Ամին Սոհամադի, Ռուզբէի Մաշհադիզադէի, Ջամշիդ Լէյսի, Անիթա Չաշեմի, Արվիա Յակոբեան, Շահրիար Ղադիրի, Թաննազ Դանեշմանդ, Ազարնուշ Էբրահիմի, Ֆերէյդուն Աւ եւ Ալի Անսարի:

ՆՓԱԿ-ի մուտքի մօտ ներկայացւած էր նաեւ իրանական աւանդական «Յաֆթսինը» («ս» տառով սկսող եօթ բարիք): Ցուցահանդէսի այցելուները հետաքրքրւած դիտում էին աշխատանքներն ու միմեանց հետ կիսում տպաւորութիւններով: Նախատեսւած էր նաեւ յաջորդ օրերին կազմակերպել իրանական կինոյի դիտումներ: Նշենք, որ այս տարի լրանում է ՆՓԱԿ-ի հիմնադրման 20-ամեակը եւ այս ցուցահանդէսը յրելեանական միջոցառումների շարքին էր պատկանում, որը նաեւ համընկաւ Իրանի ու Յայաստանի բարեկամութեան 20-ամեակին եւ իրանական Նոր Տարուն:

ԹԵՂԻՍ-ԵՐԵՎԱՆ ԱՖՏՈՐՈՒՄԻ ՎՁԱՐ ՄԱՐԱԿՈՒՄ ՉՈՂԻՆ Է ԵՐԵՔ ՄԱՐԴ



20 Մարտ 2012-ին Թեհրանից Երեւան մեկնող հանրակառքի անիւի պայթիւնից առաջացած ակտովթարի հետեւեանքով երեք մարդ զոհուեց եւ ակելի քան 10-ը վիրաւորուեցին: Ջոհեթից երկուսը թեհրանահայեր են, իսկ երրորդը՝ իրանցի:

Ատրպատականի թեմի Ազգային Առաջնորդարանի հաղորդման համաձայն.

«Անթիլիասի Մայրավանքից վերադարձին, որտեղ գտնուում էր միջ-թեմական ժողովներին մասնակցելու նպատակով, Ատրպատականի Հայոց Թեմի Կաթողի-

կոսական Փոխանորդ Գերայ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթեանը, Երկուշաբթի 26 Մարտ 2012-ին, այցելութիւն տուեց Թաւրիզի հիւանդանոցը, հիւանդաց յատուկ աղօթք կատարելով այնտեղ:

Յայտնենք, որ թեհրանահայ վիրաւորների մեծ մասը, ինչպէս նաեւ արկածի զոհ դարձած ննջեցեալների մարմինները արդէն փոխադրուել են մայրաքաղաք՝ Թեհրան:

Երկնային խաղաղութիւն ենք հայցում անմեղ զոհերի հոգիների համար, շուտափոյթ ապաքինում վիրաւորներին, եւ համբերութիւն տուժածների ընտանեկան պարագաներին»:

Վթարի երեք զոհերի անունները՝
Դենիս Սէթաղայեան
Անդրանիկ Ղարիբեան
Առաշ Վահրաթ

ՀՐԴԵՂ ԵՐԵՎԱՆԻ «ԱԼԷՆ-ԷԼԷՆ» ԺԱՄԱՆՅԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՏՈՒԾԵԼ ԵՆ ԻՐԱՆՅՈՒՆԵՐ

Մարտի 20-ի գիշերայ ժամը 01.05-ին ահագանգ է ստացուել, որ Երեւանի Աբովեան 3 հասցեւում գտնուող «ԱԼԷՆ-ԷԼԷՆ» ժամանցային կենտրոնի երկրորդ յարկոււմ հրդեհ է բռնկուել: Դէպքի վայր է մեկնել 3 մարտական հաշարկ, մէկ ակտուսանդուղք, ճգնաժամային կառավարման կենտրոնի եւ հրդեհաշիջման կազմակերպման բաժնի օպերատիւ խմբերը: Հրդեհը մեկուսացուել է ժամը 01.31-ին, մարել է՝ 01.35-ին: Հիւրանոցի երկրորդ յարկոււմ այրուել է 4 սենեակ՝ գոյքով եւ միջանցքը՝ մօտ 200 քմ: Այս մասին Panorama.am-ին յայտնեցին արտակարգ իրավիճակների նախարարութիւնից:

Ըստ աղբիւրի, հրդեհի հետեւեանքով տարբեր աստիճանի այրւածքներով ճառագայթային բժշկու-

թեան եւ այրւածքների կենտրոն են տեղափոխուել Իրանի Իսլամական Հանրապետութեան երեք քաղաքացիներ:

Իսկ եօթ այլ իրանցիներ եւ ՀՀ մի քաղաքացի՝ 1978 թ. ծնւած Վահէ Միրաքեանը ծխահարուել են եւ տեղում ստանալով առաջին բուժօգ-

նութիւն (պարամեդիկների կողմից) տեղափոխուել են «Արմենիա» եւ «Մուրացան» բժշկական կենտրոններ:

Բժիշկները տուժածների առողջական վիճակը գնահատել են միջին ծանր:

Աղբիւր՝ Panorama.am



ԻՆՉՈՐԻ ԱՅՍ ՏԱՐԻ ՆՈՎՐՈՒԶԻՆ ԻՐԱՆՅԻՆԵՐԸ ՔԻՉ ԵԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Իրանական Նովրուզ տօնն, ի տարբերություն նախորդ տարիների, այս անգամ Հայաստան է բերել աւելի քիչ իրանցիների: Այս մասին փաստում են թե՛ հիւրանոցների աշխատակիցները, թե՛ հասարակ քաղաքացիները, թե՛ այցելած իրանցիները, թե՛ տաքսիների վարորդները:

Օրինակ՝ տաքսիների վարորդները բողոքում են, որ այս տարի քիչ իրանցիներ են եկել Հայաստան եւ իրենք չեն կարողացել նորմալ փող աշխատել: Հարցին, թե հնարաւոր էր իրանցիներին խաբել եւ աւելի շատ գումար պահանջել, վարորդներից մէկը պատասխանեց, որ այդքան էլ չէ, որովհետեւ նրանցից ոմանք «նայում են հաշվիչին, կոպեկ-կոպեկ հաշում, նոր տալիս», քչերն են առատաձեռն լինում վարորդների նկատմամբ: Իրանցիների քիչ հոսքը Հայաստան վարորդները բացատրում են «էս երկրի երկիր չլինելով»: «Դէ ո՞վ կը գայ Հայաստան, այնքան թանկ է էս երկրում ամէն ինչ, Վրաստան կը գնան էլի, ինչի՞ գան Հայաստան», - NEWS.am-ի հետ զրոյցում ասաց վարորդների մէկը:

NEWS.am-ն այցելեց նաեւ Կենտրոնական աւտոկայան, որտեղ տեսանք իրանցիներով լի մի քանի աւտոբուսներ, որոնք արդէն մեկնում էին Թեհրան: Մեզ հանդիպած պարսիկները հիմնականում երիտասարդ տղաներ էին, կային նաեւ ընտանիքներ, ովքեր երեխաների հետ էին այցելել Հայաստան:

Իրանահայ Վոլգան NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում պատմեց, որ թեւեւ Երեւանում տուն ունի, բայց այս անգամ Նովրուզին այցելելիս մնացել է հիւրանոցային

համալիրներից մէկում: Հայաստանում 5-օրեայ հանգիստը նրա վրայ արժեցել է 1700 դոլար, ըստ որում՝ իրեն շապուկներ թոյլ չի տւել, հագուստ եւ այլ իրեր չի գնել: Նա եւս շեշտեց, որ այս տարի շատ քիչ իրանցիներ են եկել Հայաստան եւ դա պայմանաւորւած է այն հանգամանքով, որ Իրանի հանդէպ միջազգային ճնշումների հետ կապւած իրենց մօտ տեղի է ունեցել արտարժոյթի թանկացում, որի հետեւանքով տարադրամով արտայայտւած իրենց եկամուտները նւազել են:

Մէկ այլ իրանցի՝ Ահմադը, շեշտեց, որ Հայաստանում տարեցտարի գները բարձրանում են, ամէն ինչ թանկանում է: «Ես ընկերներ ունեմ, դրա համար եկայ Հայաստան, ապրելու վայրի համար գումար չեմ վճարել, բայց էլի ահագին ծախսել եմ: Իրանի իմ ընկերները գերադասեցին այլ վայրեր գնալ՝ ԱՄԷ, Թուրքիա, Ադրբեջան, Վրաստան, որտեղ աւելի մատչելի է», - նշեց Ահմադը: Տարիներ ի վեր իրանցիներին իրենց Ամանորը երկրից դուրս նշելու հիմնական շարժառիթն այն է, որ «բաց երկրներում» ոգելից խմիչքների օգտագործման արգելք չկայ, զարճանքի եւ վայելքների վայրերը բաց են, կարելի է մի լաւ լիցքաթափել:

Նրանց Երեւան է բերել նաեւ իրենց սիրելի երգիչներին ունկնդրելու հանգամանքը, քանի որ իրանցի մի շարք երգիչներ արգելւած են Իրանում, նրանք իրենց իրանցի հանդիսատեսի հետ հանդիպելու համար Նովրուզի կապակցութեամբ համերգերով են հանդէս գալիս տարածաշրջանի այլ երկրներում՝ Հայաստանում, Թուրքիայում, ԱՄԷ-ում, Ադրբեջան

ում: Այս անգամ, Վոլգայի խօսքով, մարգահամերգային համալիրում դատարկութիւն էր, շատ քիչ իրանցիներ կային՝ ի տարբերություն նախորդ տարիների:

Իսկ Էկոնոմիկայի նախարարութեան զբօսաշրջութեան վարչութեան պետ Մեխակ Ապրեսեանը NEWS.am-ի թղթակցից հետ զրոյցում նշեց, որ իրանցիների այցի մասին համակարգւած պաշտօնական տւեալները պարզ կը լինեն Ապրիլի վերջին, երբ բոլոր ատեաններից հաւաքի տեղեկատուութիւնը: Նրա խօսքով՝ Նովրուզի հետ կապւած իրանցիները Հայաստան են գալիս Մարտի 1-30-ն ընկած ժամանակահատուածում: Եթէ 2010թ այս ժամանակահատուածում Հայաստան է այցելել 21 հազար իրանցի, ապա նախորդ տարի՝ 25 հազար, այս տարի եւս նրանք ակնկալում են, որ կը պահպանեն աճի տեմպերը, եթէ իհարկէ չլինեն օբիեկտիւ խոչընդոտներ: Իսկ որպէս օբիեկտիւ խոչընդոտ, Մեխակ Ապրեսեանի խօսքով, կարող է հանդիսանալ տնտեսական խնդիրը, փոխարժեքի բարձրացումը եւ այլն:

Նրա խօսքով՝ զբօսաշրջիկը Հայաստան մէկ այցելութեան ժամանակ ծախսում է միջինը 1000 դոլար՝ կախւած իհարկէ այստեղ մնալու ժամանակահատուածից, պայմաններից եւ այլն: Մտավախութեանը, թէ մեր հարեւան երկրները կարող են Հայաստանից «խլել» իրանցի զբօսաշրջիկներին, Ջբօսաշրջութեան վարչութեան պետն արձագանքեց, որ մենք ամէն դէպքում պետք է պատրաստ լինենք մրցակցութեանը եւ լինենք մրցունակ:

NEWS.am
Մարտ 25, 2012

«ՊՏՈՅՏ ՄԸ» ՄԵՂՐԻԻ ԱՆՃԱԿԵՏԻ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐՈՒՄ

Տիգրան Դալբեան



Մեղրիի սահմանային անցակետից դէպի Իրանի Իսլամական Հանրապետութիւն տանող ճանապարհը վերջին անգամ անցել են Սբ. Ծննդեան տօների օրերին: Անցակետի երկու կողմում էլ լաւ հիմքերի վրայ են դրւած մաքսային եւ անցագրային ստուգման աշխատանքները: Կան մասնակի թերութիւններ, որոնք կարելի է ընթացքում վերացնել եւ սահմանը հատող հարեւան երկրների քաղաքացիների եւ միւս տուրիստների ճամփորդութիւնն առաւել հաճելի դարձնել: Բերեն մի քանի օրինակներ.

Սահմանային կետի իրանական հատւածում փակցւած է երեւանում Իրանի դեսպանութեան ուղեցոյց-յայտարարութիւ-

նը, որն իր երկրի քաղաքացիներին բացատրում է Հայաստան ճամփորդելու մի շարք կանոններ՝ արտարժոյթի փոխանակում, վիզայի երկարաձգում, ատոմեքենայի ապահովագրում, հիւրանոցի կամ բնակարանի ամրագրում, տրանսպորտ, կարեւոր փաստաթղթերի ստորագրում եւ փոխանակում եւ դեսպանութեան շուրջօրեայ օգնութեան հեռախօսահամարներ: Աւաղ նոյնը ես չտեսայ մեր կողմում:

Իրանական կողմում կառուցւած է մեծ սպասարահ, դրւած են նստարաններ, հեռուստացոյց, գործում է բուֆետ եւ անգամ վարդակների սեղանիկ է նախատեսւած ճամբորդների բջջային հեռախօսների լիցքաւորման համար:

Տասնեակ պաստառներով բարի գալուստ է ասւում Իրան մտնող հիւրերին: Հայկական կողմում դեռ յաղթահարւած չեն խորհրդային շրջանի կարծրատիպերը, բացակայում են սպասարկման յիշւած պայմանները. չեն պակասում նաեւ անցակետում աշխատող զանազան պաշտօնեաները, որոնք շրջանցում են «Չծխել» ցուցանակը:

Անցակետի երկու կողմում շօշափելի են Ռուսաստանի եւ Իրանի պետութիւնների եւ նրանց ատրիբուտների ներկայութիւնը՝ պետական դրօշ, ղեկավարների լուսանկարներ եւ այլն: Հայ ոստիկաններն իմ խնդրանքին ի պատասխան շատ փորձեցին կէսգիշերայ այդ մթութեան մէջ

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԵԱՆԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՌՈՒԲԻԿ ՍԱՐՂԱՐԵԱՆԻՆ ԶՐԿԵԼ ՊԱՏՉԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՆՂԱՏԻՑ. ԻՆՉՈՐԻ

Մ.Ս.



Քանի որ Դոկտ.Ռուբիկ Սարղարեանը, խնդրոյ առարկայ յօդածը իր կայքում՝ «Համայնք»-ում, ստորագրել է որպէս Պատգամաւորական ժողովի անդամ, այս պատճառով էլ Աստղիկ Բաբայեանը մի նամակով դիմել է ՊԺ, եւ նրա պատգամաւորութիւնից զրկելու պահանջը ներկայացրել: Պատգամաւորական ժողովը հարցը համարել է անձնական, եւ մերժել է կարծիք տալ այդ մասին: Իհարկէ հարցը չի վերաբերում պատգամաւորական ժողովին, բայց այն նաեւ չի կարելի համարել ամբողջովին անձնական: Խն-

դիրը հետեւեալն է. Ա. Բաբայեանը ցանկացել է «Արաքս» շաբաթաթերթին մօտ (կամ այդ շաբաթաթերթի կազմի անդամներ) Ալֆրեդ Բաղդասարեանին եւ ժողգէ Ամիրեանին ներառել Բարեգործական միութեան վարչութեան կազմի մէջ: Դա չի հերքել Ա. Բաբայեանը «Հայելի» կայքի հարցերին տուած իր պատասխաններում: Ռ. Սարղարեանը հակազդել է այդ միտումին: Դա, երեւի, գալիս է Սարղարեանի եւ «Արաքս»-ի միջեւ գոյութիւն ունեցող անձնական եւ քաղաքական տարածայնութիւններից: Նա ասում է, որ դա արել է Բարեգործականի մի խումբ երիտասարդ անդամների պահանջով: Նոյն «Հայելի» կայքում հրատարակուած հարցազրոյցում, Բաբայեանը չի հերքել նաեւ նման դժգոհ երիտասարդների խմբաւորման գոյութիւնը միութիւնում: Խնդիրն անկասկած ունի իր քաղաքական արմատները, սակայն ցաւալին Սարղարեանի գրութեանը տրուած պատասխանի ոճն է: Ես՝ որպէս բանից անտեղեակ, հասարակ ընթերցող, մշուած պատասխան յօդածը կարդալով, չկարողացայ որեւէ կարծիք կազմել եղելու-



թեան եւ ասուած խօսքերի ճիշտ ու սխալի մասին: Տրամաբանականը այն կը լինէր, որ ՏԿՆ. Բաբայեանը իր պատասխան-նամակում պարզաբանէր Սարղարեանի կողմից առաջ քաշուած հարցերը, այն ինչ, դրա փոխարէն՝ նա, այսպէս ասած, հակայարձակման է դիմել եւ զբաղել՝ Սարղարեանի քաղաքական եւ անձնական անցեալի դէպքերով, որոնք տուեալ հարցին ոչ մի կապ չունեն եւ կատարուած յաւակնութիւնները չեն հերքում:

մաքսատան շէնքի տանիքի վրայի հայկական եռագոյնն ինձ ցոյց տալ, իսկ շէնքի ներսում միայն Ռուսաստանի դրօշն էր եւ այդ երկրի նախագահի լուսանկարը: Անհասկանալի պատճառներով հայկական եւ պարսկական կողմի սահմանային անցակէտերում չի թոյլատրուում լուսանկարել: Դա մեկնաբանուում է պետական գաղտնիք չբացայայտելու անհրաժեշտութեամբ: Լուսանկա-

րելն ինձ համար ընդամենը պէտք էր ընթերցողին ներկայացնէի Իրանի սահմանապահ զօրքի այն սպային, որը խախտելով գինուրական օրէնքը համազգեստի հետ չստիկ է հագել եւ կամ ռուսական սահմանապահ զօրքի այն սպային, որն իր ալարկոտութեամբ անտեղի հերթ է գոյացրել եւ նրա գլխավերեւի ժամացոյցն էլ վաղուց է, որ դադարել է աշխատելուց: Վստահ եմ, որ լուսան-

կարը երկու կողմին էլ զգաստութեան կը հրաւիրէր եւ կօզմէր սահմանային անցակէտերի աշխատանքի բարելաւմանը:

Աղբիւր՝ «Առաւօտ» օրաթերթի կայք

ՀԱՄԱՅՆՔԸ՝ ՆՈՐ ՏԱՐՈՒՑ ՆՈՎՐՈՒՉ



ԲԻԶՆԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ 2 ՄԻԼԻԱՐԴ ԹՈՒՄԱՆ ԲԱՃ

Մարտի 6-ին Թեհրանի հայոց թեմի պատգամաւորական ժողովում տարեկան նախահաշի ըննարկումներ տեղի ունեցան, եւ ժողովը համարեա միաձայնութեամբ վաւերացրեց թեմական խորհրդի կողմից ներկայացուած 55 միլիարդ ռիալանոց բիւջէն: Յառաջիկայ իրանական տարւան, թեմական խորհուրդը ընթացիկ ծախսերը հոգալու համար կարիք ունի 5.5 միլիարդ թումանի, իսկ նրա եկամուտները նախատեսուում են 3.3 միլիարդ թումանի շուրջ: Դա ցոյց է տալիս 2.2 միլիարդ թումանի, այսինքն՝ մօտ 40 տոկոսանոց բաց, որն օրէնքով պիտի հայթայթի ազգային կալւածների վաճառումից գոյացած գումարով: Իհարկէ, կան տեսակետներ այն մասին, որ այս բացը իրական չէ, եւ իրական բացը սրանից աւելի պակաս է: Հաւանական է, բայց այն մասին թէ կայ այդպիսի բաց, ոչ ոք չի կասկածում: Համայնքի բիւջէի այսպիսի պատկերը, որն արդէն տարիներ է, ինչ կրկնուում է, վկայում է այն մասին, որ համայնքը, այսպէս ասած, գրպանից է ուտում, իր ընթացիկ ծախսերը դրամազլխից է ապահովում: Իսկ սա բնականաբար տանում է դէպի սնանկութիւն: Ձարմանալին այն է, որ թեմական խորհուրդը այսպիսի նախահաշիւ է ներկայացրել, մինչդեռ խորհրդի ատենապետ Էդարդ Բաբախանեանի ելոյթներից ու մեզ տուած հարցազրոյցից կարելի է այնպէս հասկանալ, որ նա լաւ գիտակցում է դրութիւնը եւ շեշտը դնում է խնայողութիւնների անհրաժեշտութեան

վրայ: Ի՞նչն է պատճառը, որ կրկին այսպիսի մեծ բացով նախահաշիւ է ներկայացւում եւ առաւել եւս՝ վաւերացւում համարեա միաձայնութեամբ:

Բիւջէի քննարկումների ժամանակ, հարց առաջացաւ, մի շարք անորոշ ծախսերի, օրինակ «զանազան ծախսեր» գլխի տակ յատկացւած գումարների մասին: Յատկանշական էին պատգամաւոր ժողովի Մեքարեանի խօսքերը. նա ասաց, թէ բոլորս էլ գիտենք, որ այդ գումարի մի մասը յատկացւում է հայ դատին, եւ զարմանք յայտնեց, թէ ինչո՞ւ է ժողովը վախենում դա պարզ ասել:

Իրօք այդպէս է: Սակայն պարզ է նաեւ, որ Հայ Դատը մի գաղափար է, եւ գաղափարին փող չի լինի տալ, փողը պիտի տալ այդ գաղափարը կրող կազմակերպութեանը: Ուստի պէտք է դա էլ պարզ ասել, թէ ում է տրուում այդ գումարը: Դաշնակցութեան: Հոսկի՞ն: Այս հարցերի մասին է, որ բիւջէն պիտի աւելի թափանցիկ դառնայ: Ոչ դաշնակցական թելի մտահոգութիւններից մէկը միշտ այն է եղել, որ տարբեր ձեւերով ազգային բիւջէն տրամադրուում է մի կուսակցութեան:

**Ի՞ՆՉ Է «ՊԱՐԶ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ»-Ը
Ի՞ՆՉ ԱՆՊԱՏԵՆՈՒԹԻՒՆ ԿԱՅ ՍՐԲԱԶԱՆԻ ՈՒՃԻԿԸ
ՆԱԽԱՆԱՇԻՈՒՄ ՅՍՏԱԿ ՆՇԵԼՈՒ ՄԵՉ**

Ձարմանալի էր, որ լուրջ բանակցութիւններ տեղի ունեցան այն մասին, թէ ինչ է նշանակում պարզ մեծամասնութիւնը: Հարցը սկսեց այնտեղից, որ այս տարւայ բիւջէում յստակ գումար է նշած թեմակալ առաջնորդի համար: Դա, երեւի, մէկի ուշադրութիւնն էլ չէր գրաւի, եթէ պատգամաւոր Հայկազ Շիրաւնեանը հարց չբարձրացներ, որ դա անպատեհ

է, եւ չառաջարկէր, որ այդ գլուխը հանւի եւ նշած գումարը՝ սրբազանի եւ իր օգնականի կեցութեան ծախսի հետ միասին, ներառւի թեմակալ առաջնորդին վերաբերող մի ընդհանուր գլխի տակ: Առաջարկը քւէարկութեան դուրս եւ ձեռք չբերեց ներկաների պարզ մեծամասնութեան ձայնը: Ուրեմն նախահաշիւը մնաց այնպէս, ինչպէս որ կար:

Ընդմիջումից յետոյ, դիւանի կողմից հարց արժարձեց, որ երեւի սխալութիւն է եղել քւէարկման ձեւի մէջ: Առաջարկուում էր, որ նախ հանւի ձեռնպահների թիւը ընդհանուր ներկաների թւից եւ յետոյ՝ որ տարբերակի կողմնակիցների թիւը աւելի բարձր է, այն էլ կիրառւի: Հարցը նրանումն էր, որ այդ դէպքում աւելի մեծ թւով քւէարկողներ կողմ էին, որ սրբազանի ռոճիկի գումարը չնշւի նախահաշւում: Այստեղ էր, որ բանակցութիւններ սկսեցին այն մասին, թէ՛ ի՞նչ է պարզ մեծամասնութիւնը: Քանի որ ժողովը չէր կարողանում եզրակացութեան գալ, որ ինչ է նշանակում պարզ մեծամասնութիւնը, երկրի խորհրդարանում իրանահայութեան պատգամաւոր Գեորգ Վարդանի առաջարկով, որոշեց, մէկ անգամ եւս հարցը քւէարկութեան դնել: Այդպէս էլ արւեց եւ այս անգամ վաւերացեց Հայկազ Շիրաւնեանի առաջարկը եւ այս անգամ վաւերացեց: Այսպիսով նախահաշւից հանւեց սրբազան հօր ռոճիկի յստակ գումարը եւ այն ներառեց մի ընդհանուր գլխի տակ:

Իրօք, զարմանալի առաջարկ, բանավեճ եւ որոշում էր: Նախ՝ ի՞նչ անպատեհութիւն ունի սրբազան հօր ռոճիկի յստակ գումարի նշումը բիւջէում: Երկրորդ՝ յամենայն դէպս գումարը կայ, միայն կեցութեան ծախսերի հետ մէկտեղ: Երրորդ՝ ամենազարմանալին այն էր, որ որոշումից դժգոհ անձինք, ինչպէ՞ս են






հարցականի տակ տանում այնպիսի պարզ տերմինի իմաստը, ինչպիսին է՝ «պարզ մեծամասնություն»-ը: Ով չգիտի, որ պարզ մեծամասնություն նշանակում է՝ ներկաների թի կեսը գումարած մէկ ձայն:

**ՈՒՍՈՒՅՈՒՅՆԵՐԻ ԵՒ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԻ ՀԱՇՎՓԱԿԻ
ՀԱՐՅՈՒ
ՄԻԱՅՆ ՓՈՒՆԶԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՄԲ ԵՆ
ԿԱՏԱՐԻԵԼՈՒ ՀԱՇՎՓԱԿՈՒՄՆԵՐԸ**

Ընդմիջումից յետոյ, գիշերայ ժամը 10-ին, ժողովն սկսեց իր քննարկումները մի կարեւոր հարցի շուրջ: Թեմական խորհուրդը առաջարկել էր, Ջոմհուրի պողոտայում մի կալւածի վաճառման գումարի այն 50 տոկոսը, որ օրէնքով պիտի յատկացւէր նոր կալւածի



գնմանը, յատկացի 105 ուսուցիչների հաշվեկալմանն անհրաժեշտ 800 միլիոն թուման ծախսերին: Նշենք, որ վերոյիշեալ կալւածի վաճառումը արդէն վաւերացւել էր ՊԺ-ի կողմից. հարցը վերաբերում էր նրան, որ ըստ ՊԺ-ում վաւերացած օրէնքի, որեւէ

ՊԱՏՊԱՄԱԻՐ ԷՄԻՆ ՄԱՅԱԿԱՆԵՆ.

ՄԵՆՔ ՄԵՐ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԾԱԽՍԵԼՈՎ ԵՆՔ ԱՌԱՋ ԳՆՈՒՄ



Ես ուզում եմ անդրադառնալ թե՛ մական խորհրդի այն տրամաբանությունը, որի պատճառով այս քայլին է ուզում գնալ (հաշվեփակ կատարել պաշտօնեաների եւ ուսուցիչների հետ) եւ մէկ ընդմիջտ այս հարցը փակել: Եթէ թոյլ տաք այդ դիտանկիւնից նայել խնդրին:

Սրանից 4 տարի առաջ նախահաշիւը քննարկելուց, թե՛ մական խորհուրդը այդ շրջանի բացը ներկայացրեց 300 միլիոն թուման. դա 5-6 տարւայ ընթացքում հասել է 2 միլիարդ 400 միլիոն թումանի: Ես հակառակ եմ այն մտքին, որ մենք պէտք է մտահոգւենք, որ մեզ սնանկացման վտանգն է սպառնում, այսինքն մենք մեր հարստութիւնները ծախսելով ենք առաջ գնում:

Իմ ամենամեծ մտահոգութիւնն այն է, որ 5 կամ 10 տարի յետոյ էլ բոլորովին զուճար գոյութիւն չունենայ, որ յետոյ սիրելի ուսուցիչները մտածեն թէ մեծ զուճար են ստանալու: Այսօր ուսուցիչները

աշխատանքի ապահովութեան մասին են մտածում, եւ գնահատելի է, որ իրենց ծայնն այսպիսով կարողանում են հասցնել Պատգամաւորական ժողով: Բայց ո՞վ պէտք է ազգային իշխանութեան տնտեսական անվտանգութեան մասին մտածի, եթէ ոչ ազգային գերագոյն ատեանը՝ Պատգամաւորական ժողովը:

Ես գնահատում եմ թե՛ մական խորհրդին, որ իր շրջանից աւելի հեռուն է նայում, այսինքն՝ նայում է 10 տարի յետոյ ինչ է լինելու մեր վիճակը եւ ինչ-որ քայլեր է ձեռնարկում:

Փորձենք մի քիչ իրար աւելի լաւ հասկանալ: Միակողմանի չդատենք, երկու կողմերի մասին էլ մտածենք: Ես վստահ եմ բոլոր պատգամաւորները մտահոգ են ուսուցիչների համար, եւ ես էլ երկրորդում եմ նրանց, որ չպէտք է որել կտրուկ գործողութեամբ կամ բիրտ միջոցներով անախորժութիւն առաջացնել այս գործում: Թողէք ճանապարհներ գտնենք, խրախուսանք միջոցներ կիրառենք: Առաջարկութիւն կար նոյնիսկ թե՛ մական խորհրդի ձեռքը զուճարի հարցով աւելի բաց թողնենք, աւելի բարձր բիւջէ յատկացնենք այդ աշխատանքը կատարելու համար, բայց հասկանանք նաեւ ընդհանրական շահերը, այսինքն՝ ազգային տնտեսական շահերը նկատի ու-

նենեալով այս հարցը քննարկենք:

Ես այս կապակցութեամբ այսինքն մեր տնտեսական ընդհանուր ընթացքի մասին մի առաջարկութիւն ունեմ, որը միայն ուսուցիչների խնդրին չի վերաբերում:

Ես առաջարկում եմ ներկայ թե՛ մական խորհրդին, որ մեր համայնքի տնտեսական գործի համար իրաւիրենք գործարար մարդկանց: 5-6 տարի առաջ այս առաջարկութիւնը չընդառաջւեց այն տրամաբանութեամբ, որ մեր տնտեսական ազգային իշխանութեան հաշիւները այնպէս չեն, որ լինի բացել բոլորի համար: Բայց ներկա Պատգամաւորականում արդէն դա բաց է եւ մանուկի ներկայացուցիչներն այստեղ են: Նոր մտքեր ու նոր դէքեր են հարկաւոր այս գործի համար: Եթէ պէտք է նախքան այն, որ յանձնախումբ կեանքի կոչւի, մի սեմինարանման փորձ կատարւի եւ համայնքի բոլոր գործարար մարդիկ հաւաքւեն, մոբիլիզացւած մի շարժում կազմակերպւի: Ստեղծենք այն ենթակառոյցը, որը կարողանայ ինչ-որ եզրակացութեան յանգել եւ մեր ազգային տնտեսութեան կառոյցը փոխել:

կալւածի վաճառման դէպքում, դրա 50 տոկոսը պիտի յատկացւի նոր կալւածի գնմանը: Թե՛ մական խորհրդի առաջարկն այն մասին էր, որ ուսուցիչների եւ պաշտօնեաների հաշվեփակի համար անհրաժեշտ զուճարը հայթայթելու համար, ՊԺ-ն բացառաբար խախտի այդ օրէնքը: Թե՛ մական խորհրդի առաջարկն այդ էր, բայց պատգամաւորներին աւելի շատ հետաքրքրում էր նախ՝ հէնց հաշվեփակի բացասական հետեւանքները մեր համայնքային կեանքում, եւ այն որ ի՞նչ կարիք կայ այս պահին, բոլոր ուսուցիչների եւ պաշտօնեաների հետ մէկտեղ հաշվեփակում կատարել:

Վիճակի պարզ պատկերը հետեւեալն է: Հայկական դպրոցների 85 ուսուցիչներ եւ առաջնորդարանի 20 պաշտօնեաներ պաշտօնական համաձայնագրով (դարարդադէ ռասմի) եւ պետական ապահովագրմամբ վարձուած լինելով, թոշակի անցնելու պահին պիտի առաջնորդարանը վճարի նրանց *Սանաւաթը* կամ փոխհատուցումը (տարեկան մէկ ամիս ռոճիկ): Թե՛ մական խորհուրդը որոշել է ապագայի ֆինանսական բեռը թեթեւացնելու համար, այդ 105 հոգու հետ, գալիք տարւայ ընթացքում (իրանական 1391-ի խորհրդին) հաշվեփակում կատարել, որից յետոյ նրանք տարեկան պայմանագրով կաշխատեն: Դա նշանա-

կում է, որ ամեն տարի պետք է նրանց աշխատանքի պայմանագիրը նորոգելի եւ նրանց կրկին չվարձակալելու պարագային (ինչը հաւանական է թւում, նկատի առնելով համայնքի քանակի նւազումը) այլեւս առաջնորդարանը նրանց բան չպիտի վճարի: Սա, բնականաբար, աշխատանքային անապահովութիւն է ստեղծում այդ մարդկանց համար: Պատգամաւոր-

ները, հասկանալով թեմական խորհրդի մտահոգութիւնները, սակայն մեծամասնաբար դէմ էին հարցը մէկտեղ լուծելուն եւ մտածում էին դա մեծ դժգոհութիւն կառաջացնի ուսուցիչների մէջ եւ կը խախտի համայնքի անդորրը: Ժողովի վերջում որոշեց հաշվեփակումը կատարել հանգրուանային՝ ոչ մէկտեղ, այլ՝ փուլ առ փուլ, եւ ինչը կարելոր է՝ փոխհամաձայ-



Եթէ հարցին նայենք գործատիրոջ ակնոցից, այո՛, դա շատ ճիշտ որոշում է նիւթական առումով, իսկ եթէ նայենք պաշտօնեայի ակնոցով, դա լաւ չէ, որովհետեւ արդէն երկար ժամանակ է, որ շուկաների պատճառով խնդիրներ են առաջացել մեր ուսուցիչների եւ պաշտօնեաների մօտ, եւ նրանք իրենց զգում են անարգած եւ անտեսած: Մենք քանի որ մեր առօրեան անցնում է դպրոցում, դրանք լաւ տեսնում ենք ու լսում:

Եթէ խօսենք համայնքի, մեր ժողովրդի շահերի առումով, թեմական խորհրդի որոշումը ճիշտ քայլ է: Բայց Մենք գիտենք, որ երբ փորձել ենք մի բան կատարել շատ շտապ, արագ ու միանգամից, միշտ կանգնել ենք ժողովրդի դժգոհութեան ու խնդիրների դիմաց: Փորձը կայ, արել եւ տեսել ենք, ու չի թւում կարիք լինի կրկնելու:

Ես հաւատացած եմ, որ ուսուցիչներին պիտի հանգիստ թողնել: Ուսուցիչը պիտի հանգիստ աշխատի, մենք դպրոցում եթէ որեւիցէ ուսուցչուհու պէտք է նկատողութիւն անենք, հաւատացէք, որ դա թողնում ենք տուն գնալու պահին, ոչ դասամիջոցին, ոչ էլ օրւայ սկիզբը, որ այդ

ՊԱՏՊԱՄԱՌ ԸՆԷ ԱԷՏԵՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՊԻՏԻ ՀԱՆՔԻՍ ԹՈՂՆԵԼ

ուսուցիչը պէտք է մտնի դասարան: Հաւատացէք դա ազդեցիկ է: Եթէ ուսուցիչը անհանգիստ է մտնում դասարան, միզուցէ աշխատի, բայց այն չի անելու, որ պէտք է անի: Եթէ խօսում ենք դպրոցների որակ բարձրացնելու մասին, էլ ինչո՞ւ ենք խանգարում սիրելի ուսուցչին:

Ես տեսնում եմ այս ամէն ինչը մօտիկից: Հաւատացած չեմ, որ այն ուսուցիչը որ պայմանագրային է, անելի լաւ կաշխատի, որպէսզի յաջորդ տարի էլ իր պայմանագիրը կնքւի, ո՛չ, այն մարդը, ինչ սիրում է իր աշխատանքը, այն մարդը, եթէ հանդարտ միջավայրում է աշխատում, սիրում է իր գործը ու լաւ է աշխատում:

Մեր ուսուցիչները ինձ որպէս պատգամաւոր դիմեցին ու զեկոյց ներկայացրին, որ թող Թեմական խորհուրդը կիսի մեզ հետ իր խնդիրները, մենք պատրաստ ենք մեր երեք ամսւայ ռոճիկը նւիրել ազգային իշխանութեանը, բայց մեզ չնւաստացնեն: Դա այն զգացումն է, ինչ նրանց մէջ կայ: Մենք դա տեսնում ենք, լսում ենք:

Ես կարծում եմ, որ այն ինչ որ տրամաբանօրէն պիտի կատարւի, թող կատարւի, բայց եկէք ձեւեր ու ելքեր գտնենք, որպէսզի ճիշտ ձեւով կատարւի:

Մենք ընդհանրապէս խօսում ենք ու ասում, որ չթողնենք ժողովուրդը գնայ, ինչպէ՞ս արտագաղթի առաջն առնել: Սա էլ հէնց նոյն խնդիրներից մէկն է, ուսուցիչն ամենաքիչ վարձով է աշխատում, բայց սիրում է իր աշխատանքը, ես ինձ եմ օրինակ բերում, թէ կարող եմ գնալ ու ուրիշ տեղ բարձր ռոճիկով աշխատել, բայց գիտեմ, որ չեմ կարող, որովհետեւ փոխարէն մտածեմ

իմ բանկային հաշիւներն անւազնելու՝ մտածում եմ իմ հոգիս բաւարարելու մասին, եւ գիտեմ, որ իմ գործակիցներս էլ այդպիսին են, որովհետեւ եթէ մտածէին նիւթականի մասին չէին մնայ այս պայմաններում:

Հիմնականում մենք միշտ ասում ենք դպրոցները սուբսիդաւորել: Ինչո՞ւ ենք դա անում: Ինչո՞ւ չենք մտածում՝ կարելի է թոշակները այնքան բարձրացնել, յետոյ էլ ասել, որ դէ լաւ, ով կարող է գալ հայկական դպրոց, ով էլ չէ՛ գնայ պարսկական. բայց մենք դա չենք անում, մենք մտահոգ ենք, որ պարսկական դպրոցից յետ վերադարձնենք մեր աշակերտին, ուրեմն եթէ սուբսիդաւորում ենք դպրոցները, ուրեմն պիտի ուսուցիչներին էլ սուբսիդաւորենք: Ուսուցչի ձեռքում է մեծամուծում ու դաստիարակւում մեր ապագայ սերունդը, մեր համայնքը:

Իսկ մի ուրիշ հարց, այն ուսուցիչը, որ պայմանագրային ձեւով չհամոզւի, ի՞նչ ենք անելու: Ասելու ենք թող, գնայ: Բնականաբար ուսուցիչը կը գանգատւի ու մենք այդպիսին չենք ուզում:

Միւս հարցը այն է, որ չկորցնենք ժողովրդի վստահութիւնը, որ ամենակարեւորն է: Այս օրերին, դպրոցներում խօսւում է թէ՛ Թեմական խորհուրդը կտրեց մեր *բիւճէյէ թաքմիլին* (լրացուցիչ ապահովագրութիւն), մեր բուժարանի քարտերն էլ յետ է վերցրել, հիմա էլ հերթը մեր աշխատավարձերին ու պայմանագրերին է հասել: Ես ինձ Թեմական խորհրդից չեմ առանձնացնում, այս հարցը ինձ էլ է վերաբերում, եւ բոլորս այստեղ հաւաքւել ենք այդ հարցի համար լուծում գտնելու: Ուրեմն եկէք լաւ մտածենք եւ մեր ժողովրդի վստահութիւնը չկորցնենք:

նութեամբ: Դա նշանակում է, որ եթէ տւեալ պաշտօնեան կամ ուսուցիչը համաձայն չէ հաշլեփակում անել, ոչ ոք նրան չի պարտադրելու: Նկատի ունենալով խնդրի կարեւորութիւնը, առանձին ներկայացնում ենք ժողովում հնչած կարծիքներից որոշ հաստատումներ:

ՄԵԶԼԻՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՅ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ՝ ՈՒՍՁԻՆ ԴՎ ՀՊՐՏԱՆԱՆՈՒ ԱՌԻՐ Է

Մարտի 2-ին տեղի ունեցաւ երկրի խորհրդարանական ընտրութիւնները: Ընտրութիւնների արդիւնքում իրանահայութեան թեկնածուներից մէկը՝ Սպահանի թեկնածու եւ ներկայի պատգամաւորը՝ Ռոբերտ Բեգլարեանը ձեռք բերեց քւէների 100 տոկոսը, այս առումով գրաւելով առաջին տեղը երկրի մասշտաբով, իսկ միւսը՝ Կարէն Խանլարեանը Թեհրանից գրաւեց երկրորդ տեղը, քւէների 92-տոկոսով: Դա իհարկէ մրցակցի բացարձակ բացակայութեան հե-

թէ այս նոյն կուսակցութիւնը հայրենիքում կը հանդուրժ՞ր նմանօրինակ ընտրութիւններ, որտեղ այլախոհեր չլինեն եւ ընտրութիւններին մասնակցելու յայտ ներկայացնեն միայն մի կուսակցութեան յարող թեկնածուներ»: Բայց կարելի է հարցնել նաեւ, որ ի՞նչն էր արգելում իրանահայ համայնքի ոչ դաշնակցական թեւին իր թեկնածուները առաջադրելու՝ ինչպէս հարցնում է նոյն յօդուածի տակը մեկնաբանութիւն գրողներից մէկը. «Ո՞վ է խանգարել միւս թեւին իր նախաընտրած թեկնածուին առաջադրելու համար»: Բնական է, որ դաշնակցականները պարտականութիւն չունեն միւս թեւի համար էլ թեկնածու առաջադրել եւ քարոզարշաւ տանել, սակայն կարելի է հարց տալ թէ ի՞նչն է պատճառը, որ այսպէս կոչուած ընդդիմադիր թեւը ընդհանրապէս հրաժարել է թեկնածու ունենալ: Այս հարցի պատասխանը պիտի որոնել երկար տարիների ընթացքում միապետական իշխանութիւն ստեղծելու ուղղութեամբ տարած գործունէութեամբ, որի ընթացքում իշխող կուսակցութիւնը ամէն գնով, ամէն օրինական եւ ոչ-օրինական միջոցներով փորձել է խեղդել ընդդիմադիր ցանկացած ձայն: Եւ ահա արդիւնքը: Ահա յաջողութիւնը: Միակ իշխանութիւնը եւ միակ պատասխանատուն: Սակայն համայնքի ոչ դաշնակցական թեւի անգործութեան մեղքը, երեւի, ճիշտ չի լինի ամբողջութեամբ բարձել դաշնակցութեան իրականացրած երկարատեւ քաղաքականութեան գլխին, ինչպէս ասել է վերը մէջ բերուած մեկնաբանութիւնում երբ «... Էս կողմի ուժերը թեկնածու չեն առաջադրում եւ պատասխան եւ, իրար միս են ուտում, չեն կարողանում փոխհամաձայնութեան գալ ...», անհնարին է մի-



տւեանքն է, եւ չեն կարծում շատ էլ հպարտանալու առիթ լինի: Ընդհանրապէս 80-ից աւելի քւէների շահումը վկայում է միապետական իշխանութեան գոյութեան մասին, ինչպէս եւ գրել է Ռուբիկ Մինասեանը «Իրանահայեր» կայքում. «... մենատիրութեամբ վարակած կառոյցների համար նման միջավայրում աշխատելը երազանք է, սակայն անհասկանալի է դառնում նոյն կուսակցութեան դեմոկրատական կամ ընկերվարական գաղափարներին յարելու յայտարարութիւնը Հայաստանում եւ սփիւռքի որոշ համայնքներում: Մի-

ասնական թեկնածու ներկայացնել: Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան նախագահ՝ Աստղիկ Բաբայեանի եւ «Համայնք» կայքի վարիչ ու ՊԺ-ի անդամ՝ Ռուբիկ Սարգարեանի միջեւ տեղի ունեցած վեճը, դրա մի նմուշը կարելի է համարել: (Այս մասին՝ նոյն համարի էջ 3-ում)

ԱԻՃԵՆՆԱՅԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԵՐԷՆՈՎ ԳԻՐԶ ԱԻՃԵՆՆԱՆ ԵՒ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ա. Հահուկարեան


(հատուած գրքից)

«ՍԱԼԱՄԱՆ ԵՒ ԷՔՍԱԼ» ՎԻՊԱԿԸ

Աւիցեննայի այս վիպակը եւս գրուած է արաբերէն: Սրա ձեռագիր օրինակը պահպանուում է Ուզբեկական Գիտութիւնների ակադեմիայի ձեռագրերի ֆոնդում գրանցուած 2385 համարի տակ: Վիպակի մանրամասն վերնագիրը հետեւեալն է. «Խուրթաթ-ութ-Ռասլիեա մին քալամ-իշ-Շայխ-իլ Ռաիս վա Ֆիխա թըսաթու Սալման վա էքսալ վա վաթթու Իւսուֆ ալէյի-ս-սալամ» (Մխիթարութեան քարոզ, որ ասել է շէյխուլ-Ռայիսը Սալմանի եւ էքսալի մասին կապուած Իւսուֆ բարի առողջի հետ:)

Աւիցեննայի «Սալաման եւ էքսալ» վիպակը տպագրուել է երկու անգամ. առաջին անգամ՝ 1880 թւականին Ստամբուլում, իսկ երկրորդը՝ Կահիրէում 1908 թւականին: Թէ ի՞նչ ձեռագիր է հիմք ծառայել այդ հրատարակչութիւնների համար, յայտնի չէ: Գիտենք միայն, որ դրանք խիստ դժուար են ճարուում եւ հետեւաբար մեր հետազօտութիւնները կատարում ենք Ուզբեկական Գիտութիւնների ակադեմիայում պահպանուող ձեռագիր օրինակի օգնութեամբ:

«Սալաման եւ էքսալ» վիպակը, որպէս միջնադարեան գրականութեան արժէքաւոր գործ, արժանացել է մի շարք նշանաւոր արեւելագետների ուշադրութեան: Ռուս բանասէր Ի. Կուզմինը գտնում է, որ նրա արմատները հեռանում են յունական կլասիկ հնադարի խորքերը: Նրա հաւաստմամբ «Սա վիպակ է թագաւոր Յերմանուսի որդի Յերկէլի մասին, որի համար իմաստուն Ալլիկուլը



հրաշքով ժառանգ է ստեղծում մանրագործի արմատներից»:

Նոյն այս կարծիքը բերում է նաեւ արեւելագետ Կ. Չայկինը: Նա գրում է «Սա հին յունական նեոպլատոնական մի վիպակ է, ինչ-որ Յերմանուս թագաւորի որդի Յերկէլի մասին, որի համար իմաստուն Ալլիկուլան հրաշքով ժառանգ է ստեղծում մանրագործի արմատներից: Այս վիպակն արաբերէն է թարգմանել սիրիացի Յունայն Իբն-Իսահակը (809-873), իսկ այնուհետեւ այն, նոյն արաբերէնով, փիլիսոփայական տրակտատի է վերածել Իբն-Սիման:

Կարծիք է եղել նաեւ այն մասին, որ Աւիցեննայի «Սալաման եւ էքսալ» վիպակը հանդիսանում է հէնց իր՝ հեղինակի երեւակայութեան արդիւնքը, որին նա միա-

ծուել է Յովսէփ գեղեցիկի մասին Ղորանի պատմութիւնը:

Այս կարծիքները, թէւ ունեն ելակէտային որոշ հիմքեր, բայց ընդհանուր առմամբ թերի են եւ ոչ հիմնաւորուած: Ամէնից առաջ նրանցում բացակայում է գիտակցումն այն բանի, որ յունական Յերմանուս թագաւորի եւ նրա որդի Յերկէլի մասին գրոյցը պատկանում է այսպէս կոչուած «Յերմեսեան գրուածքների» շարքին եւ, հետեւաբար նրա արմատները հեռանում են ոչ միայն յունական կլասիկ հնադարի խորքերը, այն գնում են աւելի հեռուն եւ հասնում հնագոյն քուրմերի երկիր Եգիպտոսը:

«Ինչպէս այժմ պարզուած է -, գրում է ակադ. Յ. Մանանդեանը, հին Եգիպտացիներն իրենց բոլոր կուլտուրական նւաճումները, դրանց թում նաեւ գիրն եւ գրականութիւնը, ենթադրում էին իբրեւ երկնքի շնորհում եւ աստուածների յայտնագործութիւն: Նրանց կարծիքով գրի հնարողը եւ գրականութեան ու գիտութեան հուանաւորողը իրենց իմաստուն Թոթ աստուածն էր: Եկեղեցական հայր Կղեմէս Աղեքսանդրացին (մ.հ. 217), որը շատ լաւ ճանաչում էր Եգիպտոսը եւ ծանօթ էր նրա հին աւանդոյթներին, վկայում է, որ այնտեղ կային 42 «Յերմեսեան երկեր» որոնցից 36-ը պարունակում էին Եգիպտական փիլիսոփայութիւնը, որ սովորում էին քուրմերը»:¹

Պարզուած է նաեւ, որ հետագայում յոյները Եգիպտական Թոթ աստծուն համապատասխան ըն-

դունելով իրենց Յերմես աստծուն, նրան վերագրած երկերը կոչել են «Յերմեսեան», որոնց շարքին պատկանել են նաեւ «տիեզերագիտական, բնախօսական, բժշկական, քերականական եւ այլ երկասիրութիւններ»:²

Յերմեսին վերագրած երկերից շատերը պահպանուել են մեր ձեռքն են հասել ինչպէս յունարէն, այնպէս էլ արաբերէն եւ հայերէն թարգմանութեամբ: Դրանցից հայերէն մեզ հասած ամենահին գործը «Յերմեսայ Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք»-ն է, որի յունարէն սկզբնագիրը, հաւանաբար, մեզ չի հասել:

Մեզ թւում է, որ «Յերմեսեան գրածքներ»-ի ազդեցութեամբ է գրած նաեւ Աւիցեննայի «Սալաման եւ Էբսալ» վիպակը, որի համառօտ բովանդակութիւնը հետեւեալն է.

Յունաստանի հզօր թագաւորներից մէկը որդի չունենալու պատճառով տրտմութեան մէջ է անցկացնում իր կեանքը, բայց ծերութեան օրերին նրա իմաստունին յաջողում է մանրագորի (թմրախոտի, առնախոտի) արմատներից ժառանգ ստեղծել, որին կոչում են Սալաման: Թագաւորի հրամանով նրա խնամքը յանձնւում է դայակ Էբսալին, որի մօտ նա դառնում է քաջ ասպետ ու զինւոր: Ամէն օր հանդիպելով իրար, Սալամանն ու Էբսալը մտերմանում են եւ, վերջապէս, սիրում միմեանց: Նրանք սկզբում աշխատում են թաքցնել իրենց սէրը, բայց հակառակ դրան, շուտով դա բոլորին է յայտնի դառնում: Թագաւորն ու նրա իմաստունը յանդիմանում են Սալամանին եւ պահանջում, որ նա մոռանայ Էբսալին: Նրանց այդ կշտամբանքներն աւելի խորն են խոցում Սալամանին եւ նա իր սիրուհու հետ փախչում, ապաստան է գտնում հեռաւոր մի կղզու վրայ: Միակ որդուն անսահմանօրէն սիրող հայրը, տեղեկանալով այդ մասին,



ابو علی ابن سینا

իմաստունի միջոցով այնպէս է անում, որ Սալամանը կորցնում է առնականութիւնը եւ վերադառնում տուն: Յայրը նորից յանդիմանում է, պահանջում նրանից թողնել Էբսալին եւ ժառանգել գահը: Սակայն Սալամանը չի համաձայնւում: Յօր յանդիմանութիւնից վիրաւորւած նա գնում է անապատը, վառում է մի մեծ խարոյկ եւ ուզում է Էբսալի հետ այրել նրա վրայ: Սակայն, դիմելով կախարդաքին, թագաւորի իմաստունը այնպէս է անում, որ այրում է միայն Էբսալը, իսկ Սալամանը մնում է անվնաս: Այս դէպքից յետոյ Սալամանի վիճակը աւելի է ծանրանում: Այդ դրութիւնից հանելու համար իմաստունը խորհուրդ է տալիս նրան՝ իրեն լսելու դէպքում գտնել եւ նրան յանձնել Էբսալին: Երիտասարդ ասպետը համաձայնւում է: Այստեղ իմաստունը պատմում է Յովսէփ գեղեցիկի մասին, որի տեսքով կախարդւած Սալամանը մոռանում է Էբսալին եւ համաձայնելով հօր հետ, արժանանում թագաւորական գահին:

Բովանդակութեան այս ամփոփ շարադրանքից կարելի է հետեւութիւն կազմել, որ Աւիցեննան

իր երկը գրել է հեքիաթային գրոյցների ազդեցութեամբ: Բայց իրողութիւնն այդ չէ: Ստեղծագործութեան սկզբնագիրը ցոյց է տալիս, որ հեքիաթայինը ստորադասւում է «Յերմեսեան գրածքներ»-ի գաղափարախօսութեանը, միջոց է հանդիսանում վիպակի փիլիսոփայական միտքը պարզեցնելու համար:

«Յերմեսեան գրածքներ»-ից իմանալով, որ «Աստուծոյ բոլոր ճանաչելի իրերի հայրն է», իսկ «երկինքը հոգու ստեղծողը», որ «մարդ ցանկանալու դէպքում կարող է աստուծանալ», Աւիցեննան իր երկը կառուցել է հէնց այդ իմացութեան վրայ: Դա, նախ՝ ապացուցւում է երկու սիրահարների անունների բացատրութեամբ, որոնք ունեն այլաբանական նշանակութիւն: Սալամանի անուն տակ, որը կազմւած է երկու տարբեր բառերի (սալամաթ=անվնաս, ասման=երկինք) միացութիւնից, հեղինակը ներկայացնում է հոգուն, իսկ Էբսալի (Էբ=յարմար, սալ=մարմին) յարմար մարմինը եւ ապա նրանց փոխադարձ սիրոյ միջոցով դրսեւորում մարմնի եւ հոգու միասնութիւնը:

Բնաւ չպէտք է կարծել, թէ Աւիցեննայի վիպակի հերոսների անունների այս բացատրութիւնը պատահական զուգահէպութիւն է: Հրաշալի կերպով հասկանալով իր առաջ դրած խնդրի կարեւորութիւնն ու պատասխանատւութիւնը, հեղինակը մտածւած կերպով դիմել է բառախաղին, տուրք տւել ժամանակի «ռելուիւցիոն օպոզիցիայի» պահանջներին եւ այդպիսով աստծու մէջ երանելի կեանքը մարմնաւորող պանթիզմը եզրայանգնել միստիցիզմի հետ:

Վիպակում գրողի իդէան հրաշալի մարմնաւորում է ստացել նաեւ հայր թագաւորի գործունէութեան մէջ: Յանձին նրա, ներկայացնելով Աստծուն, Աւիցեննան այնպէս է դարձրել հարցը, որ

արիւնակցական կապ կայ նրա եւ մարդու միջեւ, որ այդ պատճառով Աստուածը ծագումն է ամէն տեսակէտից մարդուն դարձնել լաւը, մաքրել մեղքերից, հասցնել նրան իր աստիճանին:

Յատկանշական է այն, որ Աստուած եւ մարդու փոխարարութեան մասին այս նոյն հայեացքը մենք գտնում ենք նաեւ «Յերմէս եռամեծի Սահմանք»-ի մէջ, որտեղ ասուում է. «Ուր մարդ է՝ եւ Աստուած. ոչ ումեք երեւի Աստուած՝ բայց մարդոյն միայն: Վասն մարդոյն Աստուած ի մարդ շրջեալ կերպանայ: Աստուած՝ մարդասէր, մարդն՝ աստուածասէր. մի ազգակցութիւն Աստուծոյ եւ մարդոյ: Միայնոյ մարդոյ Աստուած լսէ եւ մարդ՝ Աստուծոյ: Երկրպագելի է Աստուած, զարմանալի մարդ: Աստուած ոչ երեւի առանց մարդոյ. ցանկալի է Աստուծոյ մարդն եւ Աստուած մարդոյն, քանզի ցանկութիւն ոչ միմեքէ, բայց ի մարդն եւ յԱստուած»: ³

Այստեղ, ինչպէս տեսնում ենք, գաղափարական մտանութիւնները, իսկապէս, շատ են. սակայն Աւիցեննայի վիպակում կան նաեւ այնպիսի կէտեր, որոնք դժարացնում են անվերապահօրէն պնդել, թէ նրա համար աղբիւր է ծառայել միայն Յերմէսի Սահմանքը: Չի կարելի վերջինիս ազդեցութեամբ բացատրել, օրինակ, մանրագործի միջոցով զաւակ ունենալու պատմութիւնը: Յետեւաբար հնարաւոր է ենթադրել, որ դա Աւիցեննան կարող էր քաղած լինել որպէս այլ աղբիւրից, մեր կարծիքով, Արիստոտէլի եւ Գալէնի երկերից, որոնք առաջարկում էին մանրագործն օգտագործել կանանց պտղաբերութեան համար:

Աւիցեննայի վիպակի այլ կէտերի համեմատութիւնից տեսնում ենք նաեւ, որ նա իր աղբիւրների նկատմամբ երեւան է բերել զարմանալի սուր դիտողականութիւն եւ մեծ խորաթափանցութեամբ զանազանել հաւանակա-

նը ոչ հաւանականից, իրականը՝ ոչ իրականից:

Ինչպէս նրա այս երկից, այնպէս էլ միւս գործերից երեւում է, որ Աւիցեննան ամէն ինչում տեսել է աստուածայինը, զգացել է մարդուն Աստուած հետ միասնութեան մէջ, եւ Աստուծուն ներկայ մարդու գիտակցութեան մէջ: Նկատենք, որ «Յերմէսեան գրածքներ»-ի նկատմամբ նոյնպիսի սուր դիտողութիւն են ունեցել նաեւ միջնադարեան հայ մտածողներից շատերը: Կարդանք Գրիգոր Մագիստրոսի թղթերից մի հատուած: «Ապականութիւն խոկալ երկոցունց մեծագունի աշխարհի եւ փոքու մանաւանդ եթէ արտաքոյ հրամանաց իմանալի աշխարհին. քանզի իմանալի աշխարհ աստուածային էութիւնն իմանի ըստ Յերմէսեայ մեծի, իսկ փոքր մարդկայինս սեռ է մեծագոյն յորում բնակեալս ենք»: ⁴

Մի այլ տեղ մեկնաբանելով մեզ արդէն յայտնի նոյն Յերմէսի Սահմանքը, Գր. Մարգիստրոսը գրում է. «Այլ բնականքս այս թէպէտեւ յօրոյ սիմեռիկոնն անւանեալ, սակայն մտաց եւ մակացութեան ընդունակ. վասն որոյ երկիր զսակոչել աստուած ոչ պատկառի, Յերմերամած (Յերմէս Եռամեծ), թէպէտեւ աշխարհ, բայց ի բազմաց աստուածս. վասն որոյ յիւրում սքանչելի տախտակին այսպէս հատանելով պարգեւ վճիտս. Աստուած անշարժելի աշխարհ, երկին շարժուն աշխարհ, մարդ բանաւոր աշխարհ, երկիր, եւ միակը Աստուած»: ⁵

Հայ մատենագիրներից Յերմէս Եռամեծի Սահմանքին անդրադարձել են նաեւ Եղիշէն, Յովհաննէս Որոտնեցի եւ ուրիշներ:

Սահմանքի մէջ մենք կարդում ենք. «Մահ իմացեալ անմահութիւն է, ոչ իմացեալն մահ»: ⁶

Այս նոյնը Եղիշէի մօտ ձեւակերպւած է այսպէս. «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»: ⁷

Կարելի է այսպիսի օրինակների թիւը հասցնել տասնեակների, սակայն բերածներն էլ պարզ ցոյց են տալիս, որ այսպէս կոչւած «Յերմէսեան գրածքներ»-ը իրօք, լայն տարածում են ունեցել նաեւ Արեւելքում եւ, հետեւաբար, Աւիցեննայի կողմից դրանց անդրադառնալը պատահականութիւն չպէտք է համարել:

1- Տե՛ս ակադ. Յ.Մանանդեան, Յերմէայ Եռամեծի առ Ասկեղպիոս Սահմանք, Բանբեր Մատենադարանի, հ.3, էջ 288

2- Տե՛ս ակադ. Յ.Մանանդեան, Յերմէայ Եռամեծի առ Ասկեղպիոս Սահմանք, Բանբեր Մատենադարանի, հ.3:

3- Յերմէայ Եռամեծի առ Ասկեղպիոս Սահմանք, Բանբեր Մատենադարանի, հ.3, 1956 էջ 309

4- Գրիգոր Մագիստրոսի թղթերը: Բնագիրն յառաջաբանով եւ ծանօթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 85

5- Նոյն տեղը էջ 205:

6- Բանբեր Մատենադարանի, հ.3, 1956, էջ 311:

7- Եղիշէի Վասն Վարդանանց եւ հայոց պատերազմին, Երեւան, 1957, էջ 14:

ԲԱՆՈՐԸ ԽՈՐՀՈՒՐԳ ԵՆ ՏԱԼԻՍ ՍՆԻԷԼ ՕՐԳԱՆԻԿ, ԲԱՅՑ ՈՐՈՂՔ ԵՆ ՕՐԳԱՆԻԿ ՄՆՆԴԻ ԱՌԱԲԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ


Ջեֆրի Քլուզեր



սնունդը, այն աճեցում է տեղում, մշակում է ազատ արօտատեղիում, սնունդ է մարգագետնում, թե ոչ, դա ձեր մարմնին բնաւ չի հետաքրքրում:

Բայց այս խաղի մասնակիցները միայն

դուք ու ձեր մարմինը չէք: Ձեր բժիշկն էլ անպայման կարծիքներ ունի այն մասին թե՛ ինչ պիտի ուտեք: Նոյնպէս ձեր ընտանիքը: Նմանապէս սննդային փորձագետները, որոնք վերջերս ներկայ են ամենուր եւ հաւատացած են, որ այն ամենը, ինչ անցնում է ձեր շրթերից, պիտի աճեցւած, հնձւած եւ շուկայ հանւած լինի ճիշտ ձեւով:



Եթէ արագ ճանապարհ էք որոնում ձեզ վատ զգալու համար, ապա կերէք այն, ինչ ձեր մարմինը ձեզանից պահանջում է ուտել: Ձեր մարմինը պահանջում է միս, ճարպ, աղ եւ շաքար: Ձեր մարմինը կարող է սնել միայն մրգերով ու բանջարեղէնով, եթէ դա պարտադիր է, բայց միայն այն ժամանակ, որ չգտնի միս, ճարպ, աղ եւ շաքար: Իսկ թէ որտեղի՞ց է գալիս ձեր

Եթե դրանց գտնում էք յոգնեցուցիչ, կամ աւելին՝ խանգարիչ, ապա իմացե՛ք, որ այդ հարցում մենակ չէք: Պրոֆեսոր Ջէյմս Մաք Ուիլիամզի կարծիքով. «Այ մարդ դա կերակուր է, դա մարդու ինքնութեան հարց է: Մենք մարդկանց խրախուսում ենք ուտել խելացի եւ առողջարար, դա լաւ, բայց յետոյ, մի անհաւատալի բարձր պատմե՛ջ ենք դնում նրանց առջեւ թէ՛ ինչպէս պիտի ուտեն»:

Լաւագոյնն այն է, ինչպէս մեզ յաճախ յիշեցնում են՝ դառնալ օր-

գանիկ. վերամշակած սննդի փոխարէն՝ թարմ բնական սնունդ, սուպերմարկետի փոխարէն՝ գիւղատնտեսական շուկայ: Այսօր օրգանիկ սնունդը ներկայացնում է ԱՄՆ-ի սննդի շուկայի միայն 3 տոկոսը, իսկ այլուր, եւրոպական երկրներում, 1-ից 7 տոկոսը: Ասիայում աւանդականօրէն ճապոնիան օրգանիկ սննդի ամենամեծ շուկան է, բայց այդ շուկան Չինաստանում, Մալայզիայում, Թայլենդում եւ Սինգապուրում արդէն աճում է: Վերջերս Բէյջինգում կայացել է նրա առաջին օրգանիկ սննդի ցուցահանդէսը, իսկ Չնդկաստանում օրգանիկ ուտեստների շուկան վերջին երկու տարիներում աճել է 200 տոկոսով: Դա ճիշտ է, որ տնտեսապէս չզարգացած երկրներում, ուր սննդի ձեռնահասութեան ապահովումը աւելի կարելոր է, օրգանիկ սննդի մասին շատ խօսք չի կարող լինել, սակայն այդ երկրներում եւս, այսպէս է տրամաբանում, նրանք ովքեր ի վիճակի են, պիտի սկսեն պաշտպանել օրգանիկակերութեան շարժումը:

Դա հիանալի է հն-




չում, բայց դա էլ իր գինն ունի: Օրգանիկ միրգը, բանջարեղէնը, միսը եւ կաթը ընդհանրապէս աւելի թանկ են քան սովորականը. որոշ դէպքերում՝ շատ աւելի թանկ: Օրինակ Չինաստանում դրանց գինը կարող է ութ անգամ աւելի բարձր լինել:

Աւելին. պարզ է, որ՝ արօտավայրերում արածած տաւարի միսը աւելի քիչ ճարպ է պարունակում, որ՝ քիմիական նիւթերից զերծ կաթը լաւ գաղափար է, սակայն այնքան էլ պարզ չէ, որ օրգանիկ միրգն ու բանջարեղէնի սննդային արժէքը որքանով է բարձր: 2009 թւականին *American Journal of Clinical Nutrition* թերթի միջոցով անցկացւած հետազօտութեան արդիւնքների համաձայն, երեք հիմնական վիտամինների եւ այլ սննդարար բաղադրիչների առումով, ոչ մի տարբերութիւն գոյութիւն չունի օրգանիկ եւ սովորական մրգերի եւ բանջարեղէնի միջեւ:

Ըստ ՄաքՎիլիամզի՝ «Մենք շատ յստակ ու պարզ գծեր ենք գծում օրգանիկ եւ սովորական սննդամթերքի միջեւ, բայց գիտութիւնը այսպիսի պարզ գծերով դրանք չի բաժանում»:

ՈՒՏԵԼՈՒ ԳԻՆԸ

Կայ մի կարելոր պատճառ առողջ սննդի կողմնակից ծայրայեղականներին չանտեսելու համար. դա այն է, որ նրանք շատ հարցերում ճիշտ են: Մեր սննդակարգը իրապէս սպանում է մեզանից ոմանց, ու նաեւ ոչնչացնում է մեր մոլորակը: Գիտական



ուսումնասիրությունների համաձայն, Ամերիկայի բնակչության 27 տոկոսը Օբիս են (այսինքն՝ նորմալ ցանկալի կշռից 20 տոկոս ավելի ծանր): Եւրոպական երկրների դէպքում էլ պատկերը համարեա նոյնն է. Գերմանիայում չափահաս տղամարդկանց մէջ օբիսները 20 տոկոսից ավելի են, ինչպէս նաեւ Բրիտանիայում եւ Ֆինլանդիայում: Զարգացած երկրներում մարդիկ չափից ավելի միս են ուտում՝ իւրաքանչիւրը տարեկան 100 կիլոգրամ՝ ԱՄՆ-ում, 90 կիլոգրամ՝ Եւրոպայում: Չինաստանում, Չնդկաստանում եւս Օբիսութեան տոկոսները աճում են: Վերամշակւած միսը լեցուն է աղով եւ high-fructose corn syrup-ով. երկու համ, որոնց դիմադրելը անհնարին է: Արեւմուտքում լուրջ է նաեւ շռայլութեան գործօնը: Այսօր ԱՄՆ-ում արտադրւում է օրական մարդագլուխ 3800 կալորի պարունակութեամբ սննդամթերք, մինչդեռ առողջ սնման համար իւրաքանչիւր մարդ կարիք ունի միայն

2350 կալորիի: Աւելորդի մի մասը թափւում է, սակայն դրա մեծ մասը լափւում են երկրի քաղաքացիները:

Պահել կերակրի ապահով հոսքը եւ միաժամանակ գները պահել ցածր, դա պահանջում է արդիւնաբերական-ինժինեբրական հնարքներ, որոնք ունեն իրենց վնասակար ազդեցութիւնները: Օրինակ Ամերիկայում միայն եգիպտացորենի արտադրութեան համար տարեկան 10 միլիոն տոննա քիմիական պարարտանիւթ է արտադրւում:

Տաւարի մսի արդիւնաբերկան արտադրութեան համար գործ են ածուում մեծ քանակութեամբ անտի-բիոտիկներ եւ աճը խթանող հորմոններ, որոնց մի մասը մնում է մսի եւ կաթի մէջ:

Մսի շուրջ ընթացող քաջքշուկը շատ ավելի սրած է: Զարգացած երկրների բնակչութեան մեծամասնութիւնը պարզապէս մսակերներ են:

Ամերիկան արտադրում է տարեկան 36 բիլիոն կիլոգրամ միս, որը անհամեմատելի շատ է իր բնակչութեան համար: Եւրոպան արտադրում է նոյն քանակութեամբ, իսկ Ասիան՝ տարեկան 103 բիլիոն կիլոգրամ: Այժմ բոլորիս յայտնի իրականութիւն է, որ այդ կենդանիները պահւում են հինականում դաժան պայմաններում՝ կուտակւած իրար վրայ գործարանների արտերում, եւ սնւում են բարձր կալորի պարունակող սննդով, որպէսզի գիրանան ամենաարագ կերպով եւ առաջնորդւեն սպանդանոց: Կենդանիները այսպիսի դաժան կարճ կեանք ապրելու իրականութիւնը առաջ է բերում նաեւ այլասիրութեան մի տարր օրգանիկ-կոմբեսիալ վիճաբանութեան մէջ: Եւրոմիութիւնում 1999 թւականին օրէնք է անցկացւել, որ մինչեւ 2012 վերացւեն հաւերի արհեստական բուժման վանդակները: Իսկ ԱՄՆ-ի Օհայօ նահանգում կենդանիների պաշտպան



խմբերը եւ նահանգապետը համաձայնութեան են եկել բարելաւել տաւարի, խոզերի եւ հաւերի ապրելու պայմանները: Կալիֆորնիայում եւս անց են կացուել նման օրէնքներ:

Այս բարեփոխութիւնները դրական նիւթական ազդեցութիւն ունեն նաեւ յօգուտ մարդու: Խոտով սնւող տաւարը պարունակում է աւելի շատ Օմեգա-3 ճարպ: Դա իջեցնում է քաղցկեղի, սրտի հիւանդութիւնների, արթորոզի վտանգը: Ինչքան աւելի շատ կովերը հանէք արօտավայրերից եւ նրանց սնէք եգիպտացորենով յագեցւած սննդով, այնքան իջնում է Օմեգա 3-ի քանակը:

Միսն

ամբողջովին սննդակարգից դուրս հանելուց բացի (դա իհարկէ լաւ ընտրութիւն է, բայց ոչ հնարաւոր բոլորի համար) այլ լուծումները ներկայացնում են դժարութիւններ: Նախեւառաջ, եթէ հէնց այսօրանից բոլորս որոշենք օգտագործել միայն առողջ եւ քիմիական նիւթերից զերծ միս, ներկայիս արտադրուող միսը չի բաւարարի: ԱՄՆ-ում տաւարի միայն 3 տոկոսն է օրգանիկ աճեցուում: Եւ այդ պակասը պատճառ կը դառնայ արդէն բարձր գները աւելի բարձրանան:

Միւս երկընտրանքն այն է, որ աւելի շատ

ծուկ ուտենք: Ձուկն աւելի առողջարար է, քանի որ պարունակում է աւելի քիչ ճարպ, աւելի ցածր քանակութեամբ կալորի եւ աւելի բարձր քանակութեամբ Օմեգա-3: Գնապոնացիների սննդակարգում աւելի շատ է գործածուում ձկան միս ու այդ պատճառով էլ նրանց սրտերը աւելի առողջ է, կրծքի քաղցկեղի դէպքերը աւելի քիչ եւ կեանքը աւելի երկար: Սակայն գիտենք, որ սպառման բարձրացման արդիւնքում երկրագնդի ձկան պաշարը արագօրէն նւազում է եւ այս պատճառով այս լուծումն էլ իրականում շատ բան չի կարող լուծել:

Կայ նաեւ մի միջին, բայց շատ ազդեցիկ ճանապարհ. կրճատել ամէն տեսակ մսի սպառումը: Եթէ չենք կարող միս չուտել, կարող ենք քիչ ուտել: Նկատի ունենալով, որ մեծ քանակութեամբ պրօտէին գոյութիւն ունի հաւկիթի, սոյայի, պանրի, ընդեղէնների եւ բանջարեղէնի մէջ, դժւար չի լինի մսի նւազ գարծածման արդիւնքում պրօտէինի պակասը այլ տեղից փոխարինել:



ՄԻՋԻՆ ՃԱՆԱՊԱՐՅՈՒՄ

Երբ կենդանական պրոտեինը, օրգանիկ թե՛ ոչ օրգանիկ, լրացուցիչ դեր ստանձնի մեր սննդակարգում, այն ժամանակ մրգերը, բանջարեղենը եւ ընդեղենը առաջնակարգ տեղ կը գրաւեն: Դա հիմնականում լաւ բան է, բայց այստեղ էլ հարցեր կան: «Վերադարձ դէպի հողը» իդէալը, այսինքն՝ այնպիսի հողագործութիւն, որում չի օգտագործուում քիմիական պեստիսիդներ (մակաբոյծերի ոչնչացման դեղեր) եւ այլ քիմիական նիւթեր, կարող է կշտացնել 6.8 միլիարդ բնակչութեամբ մի աշխարհ: Ասէք ինչ, որ ցանկանում էք հողագործական բիզնեսի չարաշահումների եւ վնասների մասին, բայց իրականութիւնն այն է, որ մէկ հեկտար հողամասից, արդիւնաբերական հողագործութեամբ կարելի է երկու անգամ աւելի բերք ստանալ: Եւ նոյնիսկ դա կարող է բաւական չլինել երկրագնդի արագօրէն

աճող բնակչութեան համար, որը նախատեսուում է 2050 թականին կը հասնի 9 միլիարդի:

Գիւղատնտեսական շուկաները անշուշտ հիանալի են, իհարկէ եթէ գները մատչելի լինեն ձեզ համար, եւ եթէ ժամանակ ունենաք երեխաներին խնամելու եւ աշխատանքի միջեւ այցելել դրանք: Եւ դա այն դէպքում, երբ ճանապարհի սուպերմարկետում արագ կարող էք գնել ձեր բոլոր կարիքները մէկտեղ: Ոչ մի խօսք, որ սննդի արդիւնաբերութիւնը արտադրում է մեծ քանակութեամբ վտանգաւոր յաւելումներ պարունակող եւ սննդարար արժեքից զուրկ ամէն տեսակ ուտելիք, բայց նաեւ կան սննդամթերք արտադրող ընկերութիւններ, որ յաջողել են շուկայ հանել մեծ քանակութեամբ առողջարար սննդամթերք եւ միաժամանակ գները պահել մատչելի մակարդակի վրայ:

Թուում է ճիշտ լուծումը երկու տեսակ արտադրողների — եւ նրանց երկու տեսակ սպառողների — համար այն է, որ գտնեն համակեցութեան ձեւեր: Իրաւացի է յարձակւել սննդարդիւնաբերութեան անառողջ եղանակների

վրայ, եւ դատապարտել դաժան վերաբերմունքը կենդանիների նկատմամբ: Բայց միաժամանակ կարելոր է վստահանալ, որ ամէն դէպքում մարդիկ առանց սննդամթերքի չեն մնայ: Եւ որ հնարաւոր է հովանաւորել բնիկ հողագործական եղանակները, ոչ միայն նրա համար, որ աւելի մեծ քանակութեամբ թարմ սննդամթերք տրամադրւի աւելի մեծ քանակութեամբ յաճախորդների, բայց նաեւ այն պատճառով, որ հովանաւորւի զարգացող տնտեսական սեկտորը, յուսալով, որ արդիւնաբերութեան աճը կարող է օգնել նաեւ իջեցնել գները:

**Անգլերէնից թարգմանեց՝
Լեւոն Ահարոնեան
Աղբիւր՝ «Թայմ» շաբաթաթերթ, 6 Սեպտեմբեր, 2010**



ՊԱՆԻՐՈՎ ԳԱՄԱԹԻ ԿԵՅՔՍ

Բաղադրույթիւն

Շաքարաւազ	1 թէյի բաժակ
Չուր	2 հատ
Սերուցքով պանիր	4հատ
Կարագ	կէս թէյի բաժակ
Ալիւր	1 թէյի բաժակ
Բէյքինգ փաուլըր	1ճ.գ.
Կաթ	կէս թէյի բաժակ
Վանիլա	ըստ ճաշակի



ՏՆՏԵՍՈՒՀՈՒ ԱՆԿԻՒՆ

ԳԵՂԵՅՎՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԿՆԵՐ(2)

Քաթրին Եաղուրի

Պատրաստման եղանակ

Շաքարաւազը, ձուն, պանիրը, կարագն ու կաթը խառնել ու լաւ հարել. յետոյ աւելացնել նաեւ ալիւրը, բէյքինգ փառուդը ու վանիլան: Պատրաստած նախանիւթը լցնել փոքրիկ կաղապարների մէջ ու ջեռոցում 150 սանտիգրադ աստիճանով, 20-ից 25 րոպէ թողնել եփուի. կէյքսերի երեսը կարելի է գարդարել գունաւոր փոշիներով կամ փոքր քաղցրերով:

Զգոյշ եղէք, որ ջեռոցը սկզբում բարձր աստիճանի վրայ է, իսկ երբ կէյքսերի երեսը սկսեց բարձրանալ ու ուռուցիկ դառնալ, ջեռոցի ջերմաստիճանը իջեցրէք. եւ յիշէք, որ թխելու ընթացքում երբեք չբացէք ջեռոցի դուռը:

Բ Ա Ր Ի Ա Խ Ո Ր Ժ Ա Կ

Սպանախի դիմակ

